

Երբ Շահաբուզ բէկ կ'ամբաստանէր զՄովսէս վարդապետ, Դաւրիժեցի (361) անոր բերանը կը դնէր. «է ոմն այր, որոյ է անունն Մովսէս, որ է վարդապետ օրինացն քրիստոնէից, որոյ բնակութիւնն է ի վանքն Տաթեւ. եւ է ինքն յերկրէն Սիւնեաց. եւ նա է օրէնուսոյց եւ դաստիարակ տէր Անդրէասին»:

Անշուշտ գիւղական ուսուցիչներէն չէր կրնար պահանջուիլ ուսմանց մէջ մեծ յառաջադիմութիւն. ժամանակին համար բաւական էր, եթէ անոնք իրենց պարկեշտ վարքով կարենային ուսուցանել «զուսումն հասարակաց մերս եկեղեցւոյ», այսինքն աւանդել մանկաւոյն գրադիտութեան առաջին տարերքը, դաստիարակէին զանոնք սաղմոսերգութեան, ժամասացութեան եւ ժամերդութեան մէջ, որպէս զի եկեղեցիներու մէջ վերահաստատուէին հին կարգերն եւ կրօնի պաշտամունքը: Թէ յաջողած էր այսպիսիներու մեծ թիւ մը հրապարակ հանել՝ կը տեսնուի Դաւրիժեցւոյ այն տողերէն, ուր կը գրէ թէ Մելքիսեղեկ կաթողիկոս ահանջ կախելով հակառակորդներու ամբաստանութեանց «նիւթ առեալ ի նոցունց նեղէր զվարդապետսն. բազում անգամ պատահեալ կաթողիկոսն աստ եւ անդ՝ գսահմանեալ կարգս նոցա խափանէր եւ գ'ի նոցանէ յառաջ կոչեալ զարսն յետս ընկրկէր» (էջ 292):

1620էն ետքը, երբ առանձին մնաց Մովսէս, անտանելի դարձաւ կեանքը Սիւնիքի